

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԷՄԻ
Ա.-Լ. ՀԱՏՈՐՆԵՐՈՒ
(1970-2010)




ՊԵՂՈՒԹ, 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՄԻ Ա.-Լ. ՀԱՏՈՐՆԵՐՈՒ
(1970-2010)**

II
A 96514

**Պատրաստեց՝
Սաֆո Օգևայեան**



ՊԵՂՐՈՒԹ, 2010

ԵՐԿՈՒ ԽՍՈՒՔ

Նախանշախնդիր՝ որ Հայկապեան Հայագիտական Հանդեսի նիւթերը աւելի մատչելի դառնան եւ աւելի գործնապէս դրուին գիտական շրջանառութեան, Հանդեսի խմբագրութիւնը յարմար դատեց նման մատենագիտութեան մը հրատարակումը:

Հայկապեան Հայագիտական Հանդեսի ԺԸ. հատորին լոյսընծայման պուզընթաց, 1998ին հրատարակուեցաւ Հանդեսի Ա.-ԺԸ. հատորներու մատենագիտութիւնը, աշխատասիրութեամբ Սագօ Օգնայեանի: Այդ հատորը իր 89 էջերուն մէջ կը հաշուէ 472 հայագիտական նիւթերու մատենագիտութիւնը եւ հեղինակային ու անշնանուններու ցանկը:

Այսօր, Հանդեսի խմբագրութիւնը ընդառաջելով Սագօ Օգնայեանի նոյն նախաշեռնութեան լոյսին կու տայ անոր ամբողջացուած աշխատասիրութիւնը՝ Մատենագիտութիւն Հայկապեան Հայագիտական Հանդեսի Ա.-Լ. Հատորներու, մեկնելով նոյն նախանշախնդրութենէն՝ գիտական աւելի լայն շրջանառութեան եւ աւելի գործնական միջոցներով մատչելի դարձնել Հանդեսի 30 հատորներուն հայագիտական նիւթերը:

Ներկայ հատորը իր 144 էջերուն մէջ կը հաշուէ 836 հայագիտական նիւթերու մատենագիտութիւնը եւ հեղինակային ու անշնանուններու ցանկը:

ՀՀՀ Խմբագրութիւն

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԷՄԻ (1970 - 2010)

ՄՈՒՏՔ

Հայկազեան Հայագիտական Հանդեսի 30 հատորները, որոնք այս մատենագիտական աշխատանքին հումքը կը գոյացնեն, կը կազմեն հսկայ փունջ մը հայագիտական բնոյթի զանազան նիւթերու: Սփիւռքի տարածքին նօսրացած հայագիտական տարեգիրքերու կողքին այս Հանդեսն ալ իր լուման ներդրած է, տրուած ըլլալով որ կը պատկանի Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին եւ որակի կողքին իր տեսականիով, եւ հայերէնի կողքին անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով կատարուած ուսումնասիրութիւններով կը հարստացնէ հայագիտութիւնն ու հայ բանասիրութիւնը: Յատկանշական է, որ Հայկազեան Հայագիտական Հանդեսի իրաքանչիւր աշխատասիրութիւն, իր վերջաւորութեան ունի տուեալ նիւթին անգլերէն կամ հայերէն ամփոփումը, որ կը դիւրացնէ գործը ուսումնասիրողներուն եւ պրպտողներուն:

Հայկազեան Հայագիտական Հանդեսի 30 հատորները՝ 1970-2010 ժամանակաշրջանին, կը ներկայացնեն հետեւեալ պատկերը.-

Ա. հատորը՝ «Հրատարակութիւն Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնի» լոյս տեսած է 1970ին, կը պարունակէ 12 հեղինակէ 19 գրութիւն եւ կը հաշուէ 236 էջ: Անոր կարճ խմբագրականին մէջ կ'ըսուի. «Ձեռնարկելով Հայկազեան Հայագիտական Հանդեսի հրատարակութեան, Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնը քայլ մը եւս առած կ'ըլլայ իր առաքելութեան ճամբուն վրայ»: Առաքելութիւն՝ որ թէեւ կը շարունակուի մինչեւ այսօր, սակայն մտասեւեռումը միշտ կայ, ինչպէս որ ԺԷ. հատորի խմբագրականը կը յիշէ. «Բանասիրական մամուլը այսօր տազնապի մէջ է, սակայն ոչ Բանասիրութիւնը: Անոր պահպանումը հայագիտական հրա-

տարակուրթիւններուն ազգային առաքելութիւնն է»:

Բ. հատորը՝ լոյս տեսած 1971ին, կը պարունակէ 17 հեղինակէ 25 գրութիւններ (ներառեալ խմբագրականը) եւ կը հաշուէ 330 էջ:

Գ. հատոր՝ 1972, 15 հեղինակէ 27 գրութիւն, 360 էջ:

Դ. հատոր՝ 1973, 20 հեղինակէ 32 գրութիւն, 360 էջ:

Ե. հատոր՝ 1974, 15 հեղինակէ 20 գրութիւն, 296 էջ:

Ջ. հատոր՝ 1977-1978, 17 հեղինակէ 25 գրութիւն, 366 էջ:

Է. հատոր՝ 1979, 17 հեղինակէ 34 գրութիւն, 396 էջ:

Ը. հատոր՝ 1980, 20 հեղինակէ 24 գրութիւն, 350 էջ:

Թ. հատոր՝ 1981, 19 հեղինակէ 35 գրութիւն, 366 էջ:

Ժ. հատոր՝ 1982-1984, 20 հեղինակէ 57 գրութիւն, 408 էջ:

ԺԱ. հատոր՝ 1991, 12 հեղինակէ 18 գրութիւն, 315 էջ:

ԺԲ. հատոր՝ 1992, 11 հեղինակէ 16 գրութիւն, 378 էջ:

ԺԳ. հատոր՝ 1993, 20 հեղինակէ 25 գրութիւն, 416 էջ:

ԺԴ. հատոր՝ 1994, 20 հեղինակէ 22 գրութիւն, 438 էջ:

ԺԵ. հատոր՝ 1995, 18 հեղինակէ 24 գրութիւն, 602 էջ:

ԺԶ. հատոր՝ 1996, 12 հեղինակէ 15 գրութիւն, 376 էջ:

ԺԷ. հատոր՝ 1997, 24 հեղինակէ 28 գրութիւն, 580 էջ:

ԺԸ. հատոր՝ 1998, 23 հեղինակէ 26 գրութիւն, 427 էջ:

ԺԹ. հատոր՝ 1999, 20 հեղինակէ 28 գրութիւն, 464 էջ:

Ի. հատոր՝ 2000, 23 հեղինակէ 27 գրութիւն, 526 էջ:

ԻԱ. հատոր՝ 2001, 21 հեղինակէ 29 գրութիւն, 466 էջ:

ԻԲ. հատոր՝ 2002, 19 հեղինակէ 23 գրութիւն, 411 էջ:

ԻԳ. հատոր՝ 2003, 24 հեղինակէ 28 գրութիւն, 560 էջ:

ԻԴ. հատոր՝ 2004, 22 հեղինակէ 31 գրութիւն, 462 էջ:

ԻԵ. հատոր՝ 2005, 14 հեղինակէ 17 գրութիւն, 506 էջ:

ԻԶ. հատոր՝ 2006, 29 հեղինակէ 40 գրութիւն, 485 էջ:

ԻԷ. հատոր՝ 2007, 23 հեղինակէ 33 գրութիւն, 544 էջ:

ԻԸ. հատոր՝ 2008, 21 հեղինակէ 29 գրութիւն, 550 էջ:

ԻԹ. հատոր՝ 2009, 25 հեղինակէ 34 գրութիւն, 486 էջ:

Լ. հատոր՝ 2010, 34 հեղինակէ 45 գրութիւն, 696 էջ:

Ընդամենը՝ 836 յօդուածներ:

Առաջին տասը հատորներուն խմբագիրն է Երուանդ Հ. Քասունին: Լիբանանեան քաղաքացիական պատերազմին եւ Հայկազեան Գոլէճի փոխադրութեան պատճառով, տարեգիրքը լոյս չտեսաւ 1985էն մինչեւ 1991: Ասկէ ետք կը նկատենք որ կազմուած է խմբագրական մարմին մը: ԺԱ. հատորին մէջ (1991)՝ այդ խմբագրական մարմինն մաս կը կազմեն Պարոյր Աղպաշեան, Արշալոյս Հ. Թոփալեան եւ Կարօ Յովհաննէսեան. ԺԲ. հատորին մէջ (1992)՝ Արշալոյս Հ. Թոփալեան, Լեւոն Վարդան եւ Ժիրայր Դանիէլեան. ԺԳ.-ԺԷ. հատորներ (1993-1997)՝ Արշալոյս Հ. Թոփալեան, Լեւոն Վարդան, Ժիրայր Դանիէլեան եւ Անդրանիկ Տազէսեան. իսկ ԺԸ. եւ ԺԹ հատորներ (1998-1999)՝ Արտա Էքմէքճի, Արշալոյս Հ. Թոփալեան, Ժիրայր Դանիէլեան, Արա Սանճեան եւ Անդրանիկ Տազէսեան. Ի. հատոր (2000)՝ Արտա Էքմէքճի, Արշալոյս Հ. Թոփալեան, Արա Սանճեան եւ Անդրանիկ Տազէսեան.

ԻԱ. հատորէն (2001) մինչեւ Լ. հատոր (2010) խմբագրական կազմի անդամ են՝ Արտա Էքմէքճի, Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Արա Սանճեան եւ Անդրանիկ Տազէսեան: ԻԶ. հատորէն (2006) սկսեալ Արա Սանճեան կը դադրի մաս կազմելէ խմբագրական մարմինն: ԻԱ. հատորէն սկիզբ կ'առնէ խորհրդատու մարմինը՝ Սիլվիա Աճեմեան, Ժիրայր Դանիէլեան, Երուանդ Երկանեան, Հրանոյշ Խաժատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Զիլինկիրեան, Մկրտիչ Յ. Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթթի եւ Պերճ Ֆազլեան, Հայաստանի ներկայացուցիչ՝ Արծուի Բախչինեան:

ԺԱ. հատորէն (1991) սկսեալ մինչեւ Լ. հատոր (2010) պատասխանատու խմբագրի պաշտօնը ստանձնած է Հայր Անդրանիկ Վրդ. Կռանեան:

ԻԵ. հատորին (2005) առանձնայատկութիւնները հետեւեալներն են. հոն չեն նշուած վերոյիշեալ խմբագրակազմին անունները, այլ վերջաւորութեան նշուած են այս աշխատանքին սատարողները: Հատորը, թէեւ տպուած է 2009ին, սակայն ան ամբողջութեամբ նուիրուած է 12-15 Սեպտեմբեր 2005ին Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ կազմակերպուած «Հայերը Լիբանանի Մէջ Իրենց Անցեալը եւ Ներկան» համագումարին: Այս պատճառով ալ աշխատանքիս մէջ այս

հատորին յօդուածներուն մէջ նշուած են «2005/2009» եւ ոչ միայն «2005» տարեթիւը: Այս հատորը իր արտաքին կողքի տեսքով ալ կը տարբերի միւսներէն, որոնք թղթակազմ են եւ ունին միօրինակ ստուերագծեր եւ իւրաքանչիւր տարի տարբեր գոյներ, մինչ ԻԵ. հատորը գոց կապոյտ լաթակազմ է եւ ունի շապիկ: Հատորին խմբագիրն է Այտա Պուճիքանեանը:

Հանդէսին բոլոր հատորներուն վերջաւորութեան գտնուած բովանդակութիւնները երկլեզու են՝ հայերէն եւ անգլերէն:

Սկզբնական շրջանին յօդուածները բաժանումներու չեն ենթարկուած. ԺԸ. հատորէն (1998) սկսեալ յօդուածները իրենց բովանդակութեան համաձայն բաժնուած են՝ «յօդուած-ուսումնասիրութիւններ»ու, «քննարկումներ»ու, «հրապարակումներ»ու, «գրախօսականներ»ու, «հաղորդումներ»ու, «մահագրութիւններ»ու եւ «Հայկազեան Համալսարան»ի առնչուած նիւթերու:

Ա. հատորէն մինչեւ ԺԲ. հատոր (1970-1992) Հայկազեան Հայագիտական Հանդէսը եղած է հրատարակութիւնը Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնին, իսկ երբ Հայկազեան Գոլէճը վերածուեցաւ Հայկազեան Համալսարանական Գոլէճի, ԺԳ. հատորէն (1993) մինչեւ ԺԵ. հատոր (1995), եղաւ հրատարակութիւնը Հայկազեան Համալսարանական Գոլէճի Հայագիտական Ամբիոնին, ասկէ ետք Հանդէսը լոյս տեսաւ՝ որպէս հրատարակութիւնը Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին:

Բացի ԺԵ., ԺԶ., ԺԷ. եւ ԻԵ. հատորներէն, մնացեալներուն վերջաւորութեան կը գտնենք մահագրութիւններու սիւնակը:

ԻԵ. (2005) եւ Լ. (2010) հատորները կը կրեն ISBN («Միջազգային Միօրինակութեան Գիրքի Թիւ») արտօնութեան թիւը:

Բոլոր հատորներն ալ տպուած են մեծ չափի (երկայնք՝ 24 սմ. եւ լայնք՝ 17 սմ.) թուղթի վրայ. յօդուածները մէկ սիւնակի վրայ էջադրուած են:

ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԵՂԱՆԱԿԸ

Այս մատենագիտութեան մէջ չեն հետեւած մատենագիտական իւրայատուկ աշխատելաձեւի մը: Օգտուած են կարգ մը մատենագիտական աշխատանքներու համակարգէն: Այս մատենագիտութիւնը նպատակ կը

հետապնդել Հանդէսին բովանդակութեան շուրջ ընդհանուր պատկեր մը ներկայացնելու կողքին, կարելի եղածին չափ ուսումնասիրողի կամ բանասէրի գործը դիւրացնել՝ փնտռելու այն յօդուածները, որոնց պէտք ունի իր աշխատասիրութեան համար:

Սոյն աշխատանքը բաժնուած է երկու հիմնական մասերու.

Ա. ՄԱՍ

Բաժանում ըստ յօդուածներու նիւթերուն: Թէեւ կարգ մը աշխատասիրութիւններ կրնան զետեղուիլ մէկէ աւելի բաժիններու մէջ, սակայն հոս դրուած են միայն մէկ բաժինի տակ, մեկնելով բովանդակութեան հիմնական նիւթէն: Այս մասը կը հաշուէ հետեւեալ տասը բաժինները.

- **ԽՍՐԱԳՐԱԿԱՆՆԵՐ՝** (էջ 11-15) (31 յօդուած) կը պարփակեն Հանդէսին առաջին էջերուն մէջ երեւցող հատորին հրատարակութեան նպատակին, առաքելութեան եւ բովանդակութեան մասին հակիրճ տեղեկութիւններ, աշխատակցողներուն ուղղուած երախտագիտական խօսքով:

- **ԼԵԶՈՒԱ-ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ՝** բաժնուած չորս ենթաբաժիններու.

Ա) **ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ** ենթաբաժին (էջ 15-24) (61 յօդուած). այն յօդուածները, որոնք առաւել չափով կ'առնչուին գրականութեան պատմութեան, գրականագիտական բնորոշումներու, գրողներու եւ իրենց գործերուն մասին տեղեկութիւններու (գրող բառը առնուած է ընդհանուր առումով, այսինքն գրող են արձակ եւ քերթուած գործ ներկայացնողը, լրագրողը, յուշագրողը, պատմաբանը, բանահիւսողը, եւլն.), հայկական պատմական գաւառներու երգերուն ու բանահիւսական ստեղծագործութիւններուն:

Բ) **ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ** (էջ 24-27) (22 յօդուած). այն նիւթերը, որոնք առաւել չափով առնչուած են բառագիտութեան, բարբառներուն, գրողներու գործերուն մէջ գործածուած լեզուին եւ բառապաշարին:

Գ) **ԱՐԽԻՒ, ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԶԵՌԱԳՐԵՐ** (էջ 27-30) (17 յօդուած). կ'ընդգրկէ նիւթեր, որոնք կը վերաբերին արխիւային փաստաթուղթերու՝ նամակներ, վաւերագրեր, ձեռագրեր, եւլն.:

Դ) **ՄԱՄՈՒԼ** (էջ 30-33) (23 յօդուած). կ'ընդգրկէ հայ մամուլի, առան-

ձին հրատարակություններու բովանդակութեան վերլուծութիւն եւ լրագրութեան պատմութեան շուրջ նիւթեր:

- **ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ** (էջ 33-55) (144 յօդուած). այս բաժնին մէջ կը մտնեն ամէն տեսակի գիրքերու գրախօսականներ: Ինչպէս նաեւ՝ բոլոր այն գործերը, որոնք *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* մէջ լոյս տեսած են հետեւեալ ենթախորագիրներուն ներքեւ. «Գիրքերու Հետ», «Հայագիտական Հրատարակութիւններ», «Հրատարակութիւններ», «Վասն Գրախօսականի», «Գրախօսականներ»:

- **ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ**. տրուած ըլլալով որ *Հանդէսին* ամէնէն ճոխ բաժինն է այս, զայն բաժնած ենք երեք մասերու.

Ա) **ՀԻՆ ՇՐՋԱՆ** (էջ 55-63) (69 յօդուած). կ'երկարի քաղաքակրթութեան պատմութեան սկզբնաւորութենէն մինչեւ ԺԴ. դար, ներառեալ՝ բոլոր հայկական թագաւորութիւնները:

Բ) **ՕՍՄԱՆԵԱՆ, ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐ** (էջ 63-72) (68 յօդուած). կ'երկարի ԺԴ. դարավերջէն մինչեւ 1918ը, ներառեալ՝ Եղեմը:

Գ) **ՆՈՐ ՇՐՋԱՆ** (էջ 72-80) (47 յօդուած). կը սկսի 1918էն հասնելու համար մինչեւ մեր օրերը: Ան կը պարունակէ այն նիւթերը որոնք կ'առնչուին Հայաստանի Ա. Հանրապետութեան, Խորհրդային Հայաստանին, ներկայ Հայաստանին, ներկայ Թուրքիոյ Հանրապետութեան մէջ բնակող հայութեան իրավիճակին, ինչպէս նաեւ Արցախեան ու Հայկական Հարցին:

- **ԵԿԵՂԵՑԻԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ** (էջ 80-85) (37 յօդուած). կը պարունակէ եկեղեցիներու պատմութեան, փոխյարաբերութիւններու, հոգեւոր երգասացութեան եւ հայ կղերականներու մասին նիւթեր, նաեւ՝ իւրաքանչիւր յարանուանութեան, մանաւանդ Աւետարանական Եկեղեցիի, կրօնական ըմբռնումները:

- **ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ** (էջ 86-88) (17 յօդուած). կը պարփակէ հայկական ընկերային-բարոյագիտական հարցերու, իմաստասէրներու եւ սուրբերու մասին յօդուածներ:

- **ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ ԵՒ ԳԱՂԹՕՃԱԽՆԵՐ** (էջ 88-94) (40 յօդուած). կ'ընդգրկէ հայկական գաւառ-

ներու եւ գաղթօճախներու սովորութիւններու եւ տեղեկութիւններու մասին նիւթեր, ներառեալ՝ Հայկազեան Հայագիտական Ամբիոնի գործունէութիւնները, եւն.:

- **ԱՐՈՒԵՍՏԻ, ԱՐՇԵՍՏԻ, ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ, ԹԱՏՐՈՆԻ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ, ՇԱՐԺԱՊԱՏ-ԿԵՐԻ ՆԻՒԹԵՐ** (էջ 95-103) (65 յօդուած). կ'ընդգրկէ եկեղեցիներու, տաճարներու, վանքերու, բերդերու, զարդաքանդակներու, տապանաքարերու, դամբարաններու, քաղաքներու, գորգարուեստի, մկրտատուններու, գեղանկարիչներու, մանրանկարիչներու, երաժիշտներու եւ դերասաններու մասին նիւթեր, նաեւ՝ բաղդատութիւններ օտարներու ստեղծածներուն հետ:

- **ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ** (էջ 103-117) (189 յօդուած). կ'ընդգրկէ տուեալ ժամանակաշրջանին մահացած հայագիտութեան առնչուող անձնաւորութիւններու մասին նիւթեր:

- **ԶԱՆԱԶԱՆՔ** (էջ 118) (6 յօդուած). հոս կը մտնեն այն նիւթերը, որոնք չեն տեղաւորուիր վերոյիշեալ ինը բաժիններուն մէջ:

Իւրաքանչիւր բաժինի մէջ յօդուածները զետեղուած են իրենց հրատարակուած տարեթիւի հիմամբ: Իւրաքանչիւր յօդուածի սկիզբը կայ թիւ մը, որմէ ետք կ'երեւին յօդուածագիրին ազգանունն ու անունը (զլխագիր): Ապա՝ յօդուածին վերնագիրը այնպէս ինչպէս որ երեւցած է *Հանդէսին* մէջ, բացի կարգ մը փոքր սրբագրումներէ: Յօդուածին վերնագիրը տրուած է շեշտուած գիրերով: Յետոյ՝ տարին եւ էջաթիւերը (էջաթիւերը կ'ընդգրկեն նաեւ յօդուածներու վերջաւորութեան երեւցող իրենց ամփոփումները): Իսկ վերջաւորութեան երբեմն փակագիծի մէջ կը տրուի հակիրճ բացատրական մը: Եթէ այս բացատրականը չակերտուած է, ապա ան մէջբերուած է յօդուածէն: Եթէ յօդուածը օտար լեզուով է այս փակագիծերուն մէջ կը նշուի յօդուածին լեզուն, նաեւ կը տրուի յօդուածին եւ անոր հեղինակին հայերէն թարգմանութիւնը: Արաբերէն յօդուածները հոս տրուած են անգլերէնով, օրինակ թիւ 3364 եւ 3646: Բոլոր գիրքերու եւ մամուլի անունները առանց չակերտներու՝ շեղագիր ներկայացուած են հոս: Փակագիծին մէջ կրնան ըլլալ հետեւեալ համառոտագրութիւնները.

ԿՆ = կայ նկար:

ԷԾ = կան էջատակի ծանոթագրություններ:

ՎԾ = յօդուածին վերջաւորութեան կան ծանոթագրություններ:

ՎԱԱ = յօդուածին վերջաւորութեան կայ անգլերէն ամփոփումը:

ՎՀԱ = յօդուածին վերջաւորութեան կայ հայերէն ամփոփումը:

ՎՖԱ = յօդուածին վերջաւորութեան կայ ֆրանսերէն ամփոփումը:

Բ. ՄԱՍ

Յանկ. Ան կազմուած է ըստ Ա. Մասին մէջ տրուած իւրաքանչիւր յօդուածի սկիզբը գետեղուած թիւերուն: Նկատի առնելու է որ այս մէկը ցանկը չէ Հայկազեան Հայագիտական Հանդէսի հատորներուն մէջ լոյս տեսած յօդուածներուն մէջի անձնանուններուն, տեղանուններուն, եւ յատուկ անուններու, այլ ցանկն է այս գիրքի Ա. Մասին մէջ երեւցող անձնանուններուն եւ տեղանուններուն:

Յանկին մէջ երեւցող իւրաքանչիւր անուան կից դրուած թիւերը՝ Ա. Մասին յօդուածներու սկիզբը երեւցող թիւերն են:

Յանկին մէջ, փակագիծի մէջ առնուած թիւերէն պէտք է հետեւցնել, թէ տուեալ գրութեան մէջ կայ յիշատակութիւնը տուեալ անունին:

Յանկին մէջ չենք դրած գրախօսականներուն վերնագիրներուն մէջ երեւցող հրատարակչատուներուն անուններն ու հրատարակուած վայրերը:

Այս ցանկին մէջ չեն նշուած հեղինակներուն տիտղոսները, բացի կղերականներէն. թէեւ Ա. Մասին մէջ անոնք նշուած են:

Այս ցանկին մէջ եթէ անձնանունը հեղինակ է, այսինքն Հայկազեան Հայագիտական Հանդէսին մէջ յօդուած ստորագրած է, հայերէնի կողքին անգլերէնով ալ տրուած է անունը:

Ա. ՄԱՍ

1) ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

- 1 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. Որպես Մուտք. Ա. հատոր, 1970, էջ 7 {Կը պարզե Զայկազեան Զայագիտական Զանդեսի հրատարակութեան նպատակը):
- 2 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. [Անվերնագիր]. Բ. հատոր, 1971, էջ 7 {Կը յայտնե թե այս թիւով հայրենի մտաւորականներ իրենց աշխատակցութիւնը բերած են Զանդեսին):
- 3 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. [Անվերնագիր]. Գ. հատոր, 1972, էջ 7 {Երախտագիտական խօսք կ'ուղղե բոլոր անոնց որոնք աշխատակցած են Զանդեսին):
- 4 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. [Անվերնագիր]. Դ. հատոր, 1973, էջ 7 {Կը յայտնե մահուան լուրը Զանդեսի երեց բարեկամներէն Յ.Ճ. Սիրունիի եւ Զրանդ Զ. Արմենի):
- 5 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. [Անվերնագիր]. Ե. հատոր, 1974, էջ 7 {Շնորհակալութիւն կը յայտնե բոլոր անոնց որոնք աշխատակցեցան Զանդեսին):
- 6 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. [Անվերնագիր]. Զ. հատոր, 1977-78, էջ 7 {Կը հաղորդե թե Լիբանանի անբնական վիճակին պատճառաւ ընդհատուած էր Զանդեսը երկու տարի՝ 1975-1976. Զանդեսը «հայագիտութեան տարբեր բնագաւառներով պարապող մեր մտաւորականութեան ժամադրաւայրը դարձնելու իրաւասութեան եւ կարելիութեան» կը ձգտի):
- 7 ԽՄԲ[ԱԳՐԱԿԱՆ]. Տասներորդ Զատորին Առիթով. Ժ. հատոր, 1982-84, էջ 7-8 {Բացատրութիւն մը թե 1970-էն ի վեր տարեգիրքը պետք է լոյս ընծայէր 15 հատոր: Լիբանանի պատերազմին պատճառաւ սակայն, միայն 10-րդ հատորն է որ լոյս կը տեսնե: Նկատի ունենալ որ նախորդ երեք հատորները (Է., Ը. եւ Թ.) խմբագրական չունին):
- 8 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Ընթերցողին. ԺԱ. հատոր, 1991, էջ 7-9 {Բացատրութիւն մը, թե լիբանանեան պատերազմին պատճառաւ, եօթը տարի յապաղումէ ետք, կը վերահրատարակուի Զանդեսը. նոյն խմբագրականին անգլերէնը):
- 9 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. ԺԲ. Զատորը. ԺԲ. հատոր, 1992, էջ 7-10 {Զայաստանի անկախացմամբ «Հայրենի Պետութեան անգորութիւնը՝անոնց [մտաւորականութեան - Ս.Օ.] նեցուկ կանգնելու»: Զատորը կը ձօնուի Վեր. Տիգրան Խրլոբեանի ծննդեան 100ամեակին. նոյն խմբագրականին անգլերէնը):

- 10 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Հատոր ԺԳ. ԺԳ.** հատոր, 1993, էջ 7-10 {Կը յայտնէ որ տնտեսական պատճառներով հայագիտական հանդեսներու հրատարակութիւնը ցանցառ կը դառնայ. «անցեալին՝ մտածող տարրերուն սակաւութիւնն էր թերեւս ասոր [հայագիտական հանդեսներու հրատարակութեան նօսրացումին - Ս.Օ.] պատճառը, իսկ այսօր երբ բազմացած է ուսումնասէր մտաւորականներուն թիւը՝ նիւթակա՛ն ազդակները կու գան խափանելու միտքին ճառագայթումը». նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 11 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Հատոր ԺԴ. ԺԴ.** հատոր, 1994, էջ 7-10 {Կը պարզէ Հայագիտութեան բնորոշումը. նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 12 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. 80ամեակ Հայոց Ցեղասպանութեան.** ԺԵ. հատոր, 1995, էջ 7-10 {Հատորը նուիրուած է Եղեռնի 80ամեակին. նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 13 ՍԱՐԳԻՍԵԱՆ, ՎԵՐ. ՌՈՊԵՐ - Ի ԴԻՄԱՑ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷԾԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ. Խօսք Զառասնամեակի.** ԺԵ. հատոր, 1995, էջ 11-12 {1995ը Հայկազեան Համալսարանական Գոլէճի հիմնադրութեան քառասնամեայ տարեդարձն է. նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 14 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Անդրադարձ. ԺԶ.** հատոր, 1996, էջ 7-10 {Հատորը նուիրուած է Հայ Աւետարանական Եկեղեցիին ծննդեան 150ամեակին. նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 15 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Անկարելին Կարելի Դարձնել.** ԺԵ. հատոր, 1997, էջ 7-10 {«...Ներկայիս հայագիտական հետազօտական հանդեսներուն թիւը եւ յաճախականութիւնը զգալիօրէն նուազած են: Բանասիրական թե՛ հրատարակութիւնները կը նահանջեն եւ թե՛ զանոնք ընթերցողներուն թիւը». նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 16 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Դիմագիծի Հարց. ԺԸ.** հատոր, 1998, էջ 5-7 {«... Կը կարծենք, թէ Արաբական աշխարհի կամ Միջին Արեւելքի պայմաններուն մէջ հրատարակուող *Հայկազեան Հայագիտական Հանդէսը*, իր դիմագիծին բնորոշումին գծով, պիտի նախընտրէ նիւթի խտրականութենէն աւելի՝ ուսումնասիրութեան մը լրջութիւնը, անոր մատուցման մակարդակը եւ հեղինակին ցուցաբերած գիտական մերժեցումը». նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 17 [ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ]. Աշխատակիցներու Ուշադրութեան.** ԺԸ. հատոր, 1998, էջ 417-418 {ԺԸ. (1998) մինչեւ Լ. (2010) հատորներուն վերջաւորութեան, բովանդակութենէն առաջ «Աշխատակիցներու Ուշադրութեան» խորագրով, հայերէն եւ անգլերէն, *Հանդէս*ին կող-

մե երկու էջնոց յստակացում մը կայ, ուր կը տրուի *Հայկազեան Հայագիտական Հանդես*ին բովանդակած եւ ներկայացուած նիւթերուն բնոյթին մասին տեղեկութիւն եւ աշխատակցութեան պայմանագրութիւն մը}:

18 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Երրորդ Հազարամեակի Սեմին. ԺԹ. հատոր, 1999, էջ 5-8 {Առաջարկ հայագիտական համագումարի մը կայացման, դիմագրաւելու համար երրորդ հազարամեակի մարտահրաւերները. նոյն խմբագրականին անգլերէնը}:

19 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Երեսնամեայի Առաջադրանքներով. Ի. հատոր, 2000, էջ 5-8 {*Հայկազեան Հայագիտական Հանդես*ը «տակաւին երկար ուղի ունի երթալիք՝ արմատաւորուելու Միջին Արեւելքի հայկական համայնքներուն մէջ, գրաւոր պատմութեան յանձնելու անոնց նախաեղեմնեան եւ յետ-եղեմնեան երթը եւ լոյսին բերելու արխիւային այն հսկայ նիւթը որ կը մթագնի տասնամեակներու փոշիին ու մոռացութեան տակ». նոյն խմբագրականին անգլերէնը}:

20 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Կը Համարինք Որ... . ԻԱ. հատոր, 2001, էջ 5-8 {«Կը համարինք, թէ լաւ հայագետ մը ըլլալու համար անհրաժեշտ է ունենալ հայոց պատմութեան ու մշակոյթի, ինչպէս նաեւ հայերէնի, ի պահանջել հարկին՝ գրաբարի, խոր իմացութիւն՝ միաժամանակ հայագիտութեան զարգացումը չանջատելով համաշխարհային գիտական որոնումներէն ու կենսափորձէն». նոյն խմբագրականին անգլերէնը}:

21 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Այժմեական Հայագիտութիւն. ԻԲ. հատոր, 2002, էջ 5-8 {«Կը հաւատանք այժմեական հայագիտութեան տեղին եւ դերին էականութեան, որ արմատաւորուած եւ խարսխուած ըլլալով դարաւոր հայագիտութեան աւանդներուն եւ նուաճումներուն վրայ, ծանրանայ Ի. դարու հայ պետականութեան համապարփակ պատմութեան, ներառեալ՝ նորանկախ Հայաստանի աւելի քան մէկ-տասնամեայ երթին, Հայկական Ցեղասպանութեան եւ անոր հետեւանքներուն բազմակողմանի ու խորացուած ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ յետ-եղեմնեան Սփիւռքի շուրջ հարիւրամեայ ընթացքին վրայ». նոյն խմբագրականին անգլերէնը}:

22 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Ինչպիսի՞ Հայագիտութիւն՝ 21րդ Դարուն. ԻԳ. հատոր, 2003, էջ 5-8 {Որպէս առաջին քայլ կ'առաջարկէ ստեղծել «համացանցային ծաւալուն կայք մը, ուր մէկտեղուին եւ առնչուին հայագիտական բոլոր նորութիւնները: Կայք մը, ուր առիթ տրուի

- բազմակարծության՝ փոխադարձ յարգանքի եւ պատշաճության սկզբունքներու յարգումով»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 23 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Ի **Խնդիր Հայագիտութեան Աճման**. ԻԴ. հատոր, 2004, էջ 5-8 {«Երրորդ հազարամեակի հայագիտութիւնը պարտի վերամշակուած միջոցներով դիմագրաւել առկայ մարտահրաւերները՝ առաւել լիարժեք կատարելու իր գիտական, ազգային եւ համամարդկային առաջադրանքները»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:
- 24 HAIDOSTIAN, REV. PAUL. **Foreword**. ԻԵ. հատոր, 2005/2009, էջ XV {Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր. Փօլ Հայտոսթեանին անգլերէն խօսքը այս հատորին հրատարակութեան առթիւ, ուր ան կը նշէ թէ Հայկազեան Համալսարանը թելակոխած է իր յիսուներորդ տարին եւ թէ այս հատորը կու գայ պատշաճօրէն գրաւելու *Հայկազեան Հայագիտական Հանդէսի*՝ իր տեղը։ Ան շնորհակալութիւն կը յայտնէ 12-15 Սեպտեմբեր 2005ին Հայկազեան Հայագիտական Ամբիոնին կողմէ կազմակերպած «Լիբանանի Հայերը. Անցեալը, Ներկան եւ Ապագան» թեմայով կայացած համագումարը Նախածեռնողներուն}:
- 25 BOUDJIKANIAN, AIDA. **Introduction**. ԻԵ. հատոր, 2005/2009, էջ XVII-XXXV {Դոկտ. Այտա Պուճիքանեան իր այս անգլերէն յառաջաբանով կ'անդրադառնայ ներկայ հայագիտութեան իրավիճակին, Նաեւ այն հայագետներուն, որոնք մասնակցած են «Լիբանանի Հայերը. Անցեալը, Ներկան եւ Ապագան» թեմայով կայացած համագումարին եւ որոնց աշխատասիրութիւնները ներփակուած են այս հատորին մէջ։ Ան կու տայ ամփոփումը իւրաքանչիւր աշխատասիրութեան։ Ապա կը տրուի նոյնին ֆրանսերէնը}:
- 26 [ԱՆՍՏՈՐԱԳԻՐ]. **Contributors**. ԻԵ. հատոր, 2005/2009, էջ 499-506 {Կը տրուի այս հատորին աշխատակիցներուն ցանկը եւ իրենց մասին կենսագրական համառօտ տուեալներ, անգլերէնով. Ռուպի-Նա Արթինեան, Շողիկ Աշըգեան, Ռուբէն Աւշարեան, Այտա Պուճիքանեան, Խաչիկ Տէր Ղուկասեան, Արաքսի Տերոնեան, Հիլմըր Զայզըր, Ասպետ Զոչիկեան, Նիքոլա Միլիորիսօ, Զլոտ Մուրաֆեան, Նորա Սալմանեան, Վերժինէ Սվազլեան, Վահէ Թաշճեան եւ Արմէն Իւրնէշլեան}:
- 27 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. **Երթը, Որ Կը Շարունակուի**. ԻԶ. հատոր, 2006, էջ 5-8 {«Կազմակերպչական զարգացումներուն առընթեր, ժառանգուած աւանդը եւս տակաւ ուռնացաւ։ Ապահովուեցաւ նիւթերու

բազմազանությունը եւ առաւել գիտականությունը, շեշտուեցաւ բազմակարծությունը, ասպարեզ տրուեցաւ նորանուն հեղինակներու»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:

28 [ԽՍՀՄԳՐԱԿԱՆ]. Միջին Արեւելքը եւ Հայագիտական Հեռանկարները. ԻԷ. հատոր, 2007, էջ 5-8 {«...Բայց Միջին Արեւելքի մէջ, աւաղ, հայագիտությունը տակաւին համաքայլ չ'ընթանար նոր ժամանակներուն հետ»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:

29 [ԽՍՀՄԳՐԱԿԱՆ]. Ամրոց Մը Արեւմտահայերէնի Համար. ԻԸ. հատոր, 2008, էջ 3-8 {«Այսօր Սփիւռքի մէջ գործածուող գրական եւ յատկապէս խօսակցական արեւմտահայերէնը նահանջի մէջ է...: Սփիւռքը կարիքն ունի իրաւագօր լեզուաբանական, համասփիւռքեան հեղինակություն վայելող Կեդրոնի մը՝ հաստատութեան կան յենակետով, համասփիւռքեան տեսադաշտով եւ համահայկական գործակցութեամբ, որուն որոշումները մատչելի եւ կիրարկելի ըլլան բոլորին ... այսպիսի նախաձեռնութեան մը մեկնակետ կրնայ հանդիսանալ Հայկազեան Համալսարանը»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:

30 [ԽՍՀՄԳՐԱԿԱՆ]. Հայագիտությունը եւ Սփիւռքի Նախարարությունը. ԻԹ. հատոր, 2009, էջ 3-8 {«Սփիւռքի Նախարարությունը պետք է աջակցի, մղում տայ, եւ նախաձեռնէ հայագիտական այնպիսի ծրագիրներու, որոնք չեն կրնար իրագործուիլ առանձին հայագիտական կեդրոններու կամ անհատ հայագետներու կարողականութեան պարունակին մէջ»։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:

31 [ԽՍՀՄԳՐԱԿԱՆ]. Հայկազեան Հայագիտական Հանդէսի Զառասնամեայ Երթը. Լ. հատոր, 2010, էջ 3-8 {40 տարիներու վրայ երկարող Հանդէսին 30 հատորները կը միտին արտայայտել «Միջին Արեւելքի եւ մանաւանդ Լիբանանի մէջ ծնունդ առած հայագիտական որոնումներ»ը։ Նոյն խմբագրականին անգլերէնը}:

2) ԼԵԶՈՒԱ-ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

Ա) ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

1001 ՕՇԱԿԱՆ, ՎԱՅԷ. ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ ԱՐԵՄՏԱՅԱՅ ԱՌԱՋԻՆ ՆԱԿԱՌՈՄԱՆԹԻՔՆԵՐԷՆ. Ա. հատոր, 1970, էջ 172-183 {ԺԹ. դարու բանաստեղծ, թատերագիր, հրապարակագիր: Վերջաւորութեան կան Հայկունիի երկերու ցանկը եւ իր մասին մատենագիտություն: ՎԱԱ}:

- 1002 ՍԱՐԳԻՍԵԱՆ, ՕՆՆԻԿ. Մերձաւոր Արեւելքի Հայ Գեղարուեստական Արձակը. Ա. հատոր, 1970, էջ 193-202 {Անդրադարձ մը, եղեռնէն ետք, Լիբանանի եւ Սուրիոյ հայ գրողներու եւ հայ գրական մամուլին: ՎԱԱ}:
- 1003 ՇԱՀԻՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. Սովետահայ Ժամանակակից Վեպը եւ Զօրայր Խալափեան. Ա. հատոր, 1970, էջ 203-212 {Վերջին տասնամեակի խորհրդահայ գրողները եւ Զօրայր Խալափեանի Որտեղ էիր, Մարդ Աստծոյ վեպը: ՎԱԱ}:
- 1004 ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ, ԱՐԲԱՄ. Մասիս Լերան Մասին Արաբական Զրոյցը. Բ. հատոր, 1971, էջ 9-16 {Ժ.-ԺԳ. դարերու կարգ մը արաբ մատենագիրներու մօտ Մասիս լերան եւ Արաքս գետի զրոյցը: ԷԾ, ՎԱԱ}:
- 1005 ՕՇԱԿԱՆ, ՅԱԿՈԲ. Խաչատուր Աբովեան. Բ. հատոր, 1971, էջ 195-198 {Խ. Աբովեան որպէս բանաստեղծ, պատմագիր, հրապարակագիր: ՎԱԱ}:
- 1006 ՕՇԱԿԱՆ, ՅԱԿՈԲ. Գաբրիէլ Սունդուկեանց Թատերագիր. Բ. հատոր, 1971, էջ 199-204 {ՎԱԱ}:
- 1007 ՕՇԱԿԱՆ, ՎԱՀԷ. Արեւմտահայ Պատմութեան Ծագումը Ակնարկ. Բ. հատոր, 1971, էջ 205-225 {Վիպակի եւ վեպի սկզբնաւորութիւնը արեւմտահայ գրականութեան մէջ 1850ականներուն: ԷԾ, ՎԱԱ}:
- 1008 ՍԻՄՈՆԵԱՆ, ՊԷՊՕ. Վերլուծումի եւ Քնահատանքի Փորձ Հայաստանի Երիտասարդական Բանաստեղծութեան Մասին. Բ. հատոր, 1971, էջ 227-261 {1970ականներու խորհրդահայ բանաստեղծութիւնը. կը կեդրոնանայ երկու բանաստեղծներու՝ Ռազմիկ Դաւոյեանի եւ Արեւշատ Աւագեանի վրայ: ԷԾ, ՎԱԱ}:
- 1009 ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԱՐՏԱՇԵՍ. Տարօնի Ժողովրդական Երգեր. Դ. հատոր, 1973, էջ 179-198 {Տարօնի ժողովրդական երգեր՝ գրի առնուած խնուցի Գարեգին Մկրտիչեանէն, Ախլաթի Սողորդ գիւղէն Ազնիւ Սեւոյեանէն, Կուսգեղցի Խումար Շարոյեանէն, մշեցի Ասանէթ Օհանեանէն, մշեցի Ալմաստէն եւ պիթլիսցի Սոֆիկ Մկրտիչեանէն: ԷԾ, ՎԱԱ}:
- 1010 OCHAGAN, VAHE. L'Ecole des Traducteurs Arméniens de Smyrne du XIXe Siècle. Դ. հատոր, 1973, էջ 199-217 {Վահէ Օշական, «Զմիռնահայ Թարգմանչական Շարժումը ԺԹ. Դարուն», ֆրանսերէն: ԺԹ. դարու արեւմտահայ մշակոյթի վերածնունդը սկսաւ Զմիռնիայէն. հոն մեծ դեր ունեցան օտար միսիոնարները եւ թարգմանիչները, որոնք խմբուած էին Տետեան եղբայրներու 1853ին հիմնած տպարանին շուրջ: Էջ 207-216 կը տրուի ցանկը այն

- գործերուն որոնք թարգմանուած են, նաեւ՝ թարգմանողներուն անունները: ԷԾ, ՎՅԱ):
- 1011 ԳՈՃԱՅԵԱՆ, ՄԻՆԱՍ. **Յովհան Մայրազումեցի՝ Միջնադարու Մեծ ճառագիրը**. Ե. հատոր, 1974, էջ 213-224 {2.-Է. դարերու ճառագիր, եկեղեցական եւ հասարակական գործիչ: ԷԾ, ՎԱԱ):
- 1012 ԶԱՍՈՒՆԻ, ԵՐՈՒԱՆԴ Զ.. **Ծննդեան 100-ամեակին Առթիւ Վեր. Եղիա Ս. Զասունի (1874-1959)**. Ե. հատոր, 1974, էջ 249-254 {Ուսուցիչ, հեղինակ բազմաթիւ ուսումնասիրութիւններու եւ աշխատասիրութիւններու: ԿՆ, ԷԾ):
- 1013 ՄԱՅԱԿԱՆԵԱՆ, Ա[ՍԱՏՈՒՐ] Շ.. **Տիրատուր Վարդապետը եւ Նրա Հանելուկները**. 2. հատոր, 1977-78, էջ 175-188 {Հայ հանելուկին պատմութիւնը, որուն ակունքները ժողովրդային են. ԺԳ.-ԺԴ. դարերու հեղինակ Տիրատուր Վարդապետին կեանքն ու գործը: ԷԾ, ՎԱԱ):
- 1014 ՂԱՆԻԷԼԵԱՆ, ԺԻՐԱՅՐ. **Մահուան 100-ամեակ - Յովսէփ Փաշա Վարդանեան Ականաւոր Լրագրողն Ու Վիպագիրը**. Ե. հատոր, 1979, էջ 243-280 {Գրող եւ լրագրող Յովսէփ Վարդանեանի (1815-1879) կեանքն ու գործունեութիւնը եւ թրքերէն լեզուով գրած *Ազապի* վէպը, ուր չէր յիշած իր անունը որպէս հեղինակ: ԷԾ, ՎԱԱ):
- 1015 ԳԱՊՊԵՆՃԵԱՆ, ԱՐՇԱԽԻՐ. **Գոյնի եւ Ձայնի Չգացողութիւնը Համաստեղի Պատմութեան Մէջ**. Ե. հատոր, 1979, էջ 303-313 {Սփիւռքահայ կարծ պատմութեան հեղինակ Համաստեղը (1895-1966): ԷԾ, ՎԱԱ):
- 1016 ՂԱԶԱՐԵԱՆ, ՎԱԶԷ. **Վահան Թեքեանը Ժամանակակիցներու Նամակներուն Մէջ**. Թ. հատոր, 1981, էջ 225-234 {Վահան Թեքեանը Երուանդ Օտեանի, Օսնիկ Զիֆթե Սարաֆի, Տիրան Զրաքեանի, Արփիար Արփիարեանի, Շահան Շահնուրի Նամակներուն մէջ: ԷԾ, ՎԱԱ):
- 1017 ԶԱՐԵԱՆ, Կ[ՈՍՏԱՆ]. **Հրապարակումներ - Կոստան Զարեան Ռեթնո Պերպերեանի Մասին**. Թ. հատոր, 1981, էջ 308-309 {Ռ. Պերպերեանի ծննդեան հարիւրամեակին նուիրուած հանդիսութեան մը, որուն ներկայ չէ կրցած գտնուիլ Կ. Զարեան, սակայն այս առթիւ նամակ մը յղած է Շահան Պերպերեանին. էջ 308՝ խմբագրական բացատրողական մը):
- 1018 ՂԱՆԻԷԼԵԱՆ, ԺԻՐԱՅՐ. **Լուսարձակ - Նոր Տուեալներ Յովսէփ Վարդանեանի Հրատարակութիւններու Մասին**. Թ. հատոր, 1981, էջ

- 315-320 {*Հանդես*ի Է. հատորի 1979-ի Ժ. Դանիելեանի ուսումնասիրութեան յաւելումով}:
- 1019 ԵՍԱՅԵԱՆ, ՉԱՊԷԼ ԵՆ ԱԼԱԶԱՆ, ՎԱՅՐԱՄ. Զրապարակումներ - Չապել Եսայեանը եւ Վահրամ Ալազանը՝ Վահան Թեքեանին.** Ժ. հատոր, 1982-84, էջ 299-308 {1930-ականներուն 4 նամակներ Վահան Թեքեանին ուղղուած, երկուքը Չապել Եսայեանէն, իսկ միւս երկուքը Վահրամ Ալազանէն. էջ 299՝ կարճ ներածական մը Վաչէ Ղազարեանի կողմէ: ԷԾ, ՎԱԱ}:
- 1020 ՎԱՐԴԱՆ, ԼԵՒՈՆ. Վեր. Տիգրան Ճ. Խրլոբեան (1891-1968).** ԺԲ. հատոր, 1992, էջ 11-39 {Հայագետ, հիմնադիրներէն մէկը Պէյրութի Հայկազեան Գոլէճին, Վեր. Տիգրան Խրլոբեանի ծննդեան 100ամեակը: ՎԾ, ՎԱԱ}:
- 1021 ԲԱԽՉԻՆԵԱՆ, ՀԵՆՐԻԿ. ԺԸ. Դարի Հայ Բանաստեղծութիւնը.** ԺԲ. հատոր, 1992, էջ 227-295 {ԺԸ. դարու բանաստեղծներուն մասին՝ Ղազար Ջահկեցի, Խաչատուր Էրզրումեցի, Պաղտասար Դպիր, Մովսէս Կարնեցի, Յակոբ Նալեան, Պետրոս Նախիջեւանցի, Պետրոս Ղափանցի, Սարգիս Բալուեցի, Սիմէոն Երեւանցի, Գրիգոր Օջականցի, Յովհաննէս Կարնեցի, Բաղեր-Օղլի Ղազար, Սայաթ-Նովա: ԷԾ, ՎԱԱ}:
- 1022 ԲԱԽՉԻՆԵԱՆ, ՀԵՆՐԻԿ. Ուշ Միջնադարի Հայ Յուշագրութիւնը.** ԺԳ. հատոր, 1993, էջ 41-73 {Կը ներկայացնէ ԺԸ.-ԺԹ. դարերու 23 յուշագրութիւններ եւ օրագրութիւններ: ՎԾ, ՎԱԱ}:
- 1023 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՊԵՏՐՈՍ. Ադոնցեան Մասունքներ.** ԺԳ. հատոր, 1993, էջ 107-111 {Պատմաբան Նիկողայոս Ադոնցէն (1871-1942) երկու նամակներ, առաջինը ուղղուած Պետերբուրգի հայկական եկեղեցիներու գոյքերու վարչութեան խորհուրդին՝ Ատոմ Եարճանեանի մասին գնահատագիր մըն է, իսկ երկրորդը՝ ուղղուած Արշակ Զօպանեանին, ուր կը խօսի հայ եկեղեցւոյ կողմէ բաշխուած նպաստին մասին: ՎԾ, ՎԱԱ}:
- 1024 ՅԱԿՈԲԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. Գրականագիտական Եզրի Սահմանները («Նորավեպ»ի Տեսութեան Պատմութիւնից).** ԺԴ. հատոր, 1994, էջ 231-256 {Վիպակին կամ կարճ պատմութեան, «Նորավեպ»ին մասին տեսութիւն: ՎԾ, ՎԱԱ}:
- 1025 ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՍԵՅՐԱՆ. Վահագն Դաւթեանի Բանաստեղծութեան Հնագոյն Աղբիւրները.** ԺԴ. հատոր, 1994, էջ 257-278 {Ենթախորագրերն են. «Հին Եգիպտական Պոեզիան «Ծուխ Ծխանի» Պոեմի Կառուցուածքում» եւ «Բանահիւսական Աւանդոյթը Վահագն Դաւթեանի Պոեմներում»: ՎԾ, ՎԱԱ}:

- 1026 SEMAAN, DR. INGRID. Some Recent Literary Excursions into Armenian History and Tradition.** ԺԴ. հատոր, 1994, էջ 279-297 {Ինկրիտ Սըմաան, «Գրական Կարգ Մը Արդի Թափառումներ Հայոց Պատմութեան Եւ Աւանդութիւններուն Մէջ» անգլերէն: Հայն ու անոր պատմութիւնը որպէս նիւթ ծառայած են արեւմտեան կարգ մը գրողներու գործերուն. հոս կը ներկայացուին գերմաներէնով գրուած կամ գերմաներէնէ թարգմանուած գործեր: ՎԾ, ՎՀԱ}:
- 1027 ՏԱԳԵՍԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ. Յակոբ Օշականի Հայ Գրականութիւն Հատորին Ծնունդի Պատմութենէն.** ԺԴ. հատոր, 1994, էջ 299-328 {Նաեւ նամակցութիւնները Յակոբ Օշականի եւ Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն Գրիգոր Կիրակոսեանի միջեւ, առաւել՝ Վահան Թեքեանի տեղեկագիրերը ներկայացուած Հ.Բ.Ը.Մ.ի Դասագիրքերու Քննութեան Յանձնախումբին, Նշան Սաաթճեանի եւ Յակոբ Օշականի պատրաստած դասագիրքերուն շուրջ: ՎԾ, ՎԱԱ}:
- 1028 ՓԱՆՈՍԵԱՆ, ՍԱՐԳԻՍ. Վազգէն Շուշանեանը Ներգաղթի Խնդրի Առջեւ.** ԺԴ. հատոր, 1994, էջ 329-338 {Կան Վազգէն Շուշանեանի երկու դիմումները Խորհրդային կառավարութեան՝ Հայաստան ներգաղթելու նպատակով: ՎԾ, ՎԱԱ}:
- 1029 SEMAAN, DR. INGRID LEYER. Armin Theophil Wegner: Armenophile, 1886-1978.** ԺԵ. հատոր, 1995, էջ 433-482 {Գերմանացի բանաստեղծ, արձակագիր, վիպագիր եւ ընկերային գործիչ Արմին Թեոֆիլ Վեկների կեանքը, գործունեութիւնը եւ իր երկու գործերը նուիրուած հայութեան. էջ 454-479 գերմանացի Վեկների հայերու մասին գրած բանաստեղծութիւններէն հատուածներ գերմաներէնով եւ՝ թարգմանութիւնը անգլերէնի Դոկտ. Ինկրիտ Սըմաանի կողմէ: Էջ 452 կան ծանօթագրութիւններ, ՎՀԱ}:
- 1030 ՅԱԿՈԲԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. Հրանտ Ասատուրը Գրականութեան Տեսաբան Եւ Պատմաբան.** ԺԵ. հատոր, 1997, էջ 393-422 {Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, լեզուաբան, քննադատ, պատմաբան, աղբիւրագետ, մանկավարժ, խմբագիր, հրապարակախօս, ազգային գործիչ, գրականութեան պատմաբան եւ տեսաբան, թատերագետ Հրանտ Ասատուրի (1862-1928) կեանքն ու գործերը. վերջաւորութեան՝ իր Աշխարհաբար Մատենագրութեան Պատմութիւն անտիպ մենագրութեան մասին: ՎԾ, ՎԱԱ}:
- 1031 SEMAAN, DR. INGRID LEYER. The Armenian Enclave on Cavanaugh Street: Social History and the Mystery Novel.** ԺԵ. հատոր, 1997, էջ

- 423-438 {Դոկտ. Իսկրիտ Սըմաան, «Զեւընօ Թաղամասի Հայկական Կղզեակը. Ընկերային Պատմութիւն՝ Եւ Գաղտնի-Ոստիկանական Վեպը», անգլերէն: Հեղինակ Ճէյն Հետտեմի գաղտնի-ոստիկանական 12 վեպերու գլխաւոր հերոսը՝ Կրեկոր Տեմարգարեան, ձգելով իր պաշտօնը որպէս ԷՖ. Պի. Այ., կը վերա-դառնայ իր ծննդավայրը՝ Ֆիլատելֆիոյ Զեւընօ թաղամասը, ուր կ'ապրի հայկական փոքր գաղութ մը: ՎԾ, ՎՀԱ}:
- 1032 ԴԱՆԻԷԼԵԱՆ, ԺԻՐԱՅՐ. **Ռուբէն Չարդարեանի Մատենագիտութիւնը (Սրբագրութիւններ, Ճշդումներ, Յանգումներ)**. ԺԸ. հատոր, 1997, էջ 465-494 {Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմէ տպուած Ռուբէն Չարդարեանի *Յայգալոյս (Արձակ Էջեր)* հատորի աւարտին Արտաշէս Տէր Խաչատուրեանի կողմէ պատրաստուած «Մատենագիտութիւն Ռուբէն Չարդարեանի» բաժինին շուրջ: ՎԾ}:
- 1033 ՓԱՆՈՍԵԱՆ, ՍԱՐԳԻՍ. **Ազգային Պատմութեան Ըմբռնումը Հրանտ Մաթեոսեանի Երկերում**. ԺԸ. հատոր, 1998, էջ 207-218 {ՎԾ, ՎԱԱ}:
- 1034 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՊԵՏՐՈՍ. **Անտիպ Էջեր Աւետիք Իսահակեանից**. ԺԸ. հատոր, 1998, էջ 319-326 {Հինգ նամակներ Ա. Իսահակեանէն՝ հայագետ Հայկ Պերպերեանին, գրուած 1936ին: ՎԾ, ՎԱԱ}:
- 1035 ԴԱՉԱՐԵԱՆ, ՎԱԶԷ. **Վահան Թեքեանի Յոբելեանական Ընդհանրական Ծառը**. ԺԸ. հատոր, 1998, էջ 327-334 {Փարիզի մէջ 10 Փետրուար 1934ին Վ. Թեքեանի գրական գործունեութեան քառասնամեայ յոբելեանական հանդիսութեան ընթացքին Վ. Թեքեանի արտասանած խօսքը: ԷԾ, ՎԱԱ}:
- 1036 ԲԱՆԴԻՆԵԱՆ, ԱՐԾՈՒԻ. Ս. **Լօրէլիի Նամակներն Արշակ Զօպանեանին**. ԺԸ. հատոր, 1998, էջ 335-368 {Շուէտաբնակ գրող Ս. Լօրէլիի (Սուրէն Երզնկեան, 1880-1963) Արշակ Զօպանեանին ուղղած 12 նամակները՝ 1948-1952 թուականներուն: ՎԾ, ՎԱԱ}:
- 1037 ԱՐԱՅԱՍԵԱՆ, ԿԱՐՕ. **Տարի Մը Առաջ (Լեւոն Վարդանի Յիշատակին)**. ԺԸ. հատոր, 1998, էջ 369-378 {Խմբագրութեան կողմէ կը տրուի *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* խմբագրական կազմի անդամ, վաղամեռիկ գրող Լեւոն Վարդանի (1925-1997) կեանքը, ապա՝ Կարօ Աբրահամեան կը թուէ անոր հրատարակուած եւ անտիպ գործերը}:
- 1038 ՍԱՐՏՈՅԵԱՆ, ԳԱԳԻԿ. **Երուանդ Լալայեանի Արա Գեղեցիկը Ժողովրդական Հեքիաթներում**. Ի. հատոր, 2000, էջ 119-137 {1902ին

- հրատարակուած այս աւանդաձեւին բաղդատութիւնը Արա Գեղեցիկի դիցաբանութեան հետ, նաեւ՝ համեմատութիւններ այլ ժողովուրդներու աւանդաձեւերու հետ: ՎԾ, ՎԱԱ}:
- 1039 SEMAAN, [DR.] INGRID LEYER. Harry Potter and the Proverbial Armenian Merchant.** Ի. հատոր, 2000, էջ 395-430 {Դոկտ. Ինկրիտ Սըմաան, «Յերի Փոթըր Եւ Առակի Կարգ Անցած Յայ Վաճառականը», անգլերէն: Յեղինակը կ'անդրադառնայ օտար գրողներու մօտ հայուն տրուած ժխտական կերպարին, ինչպէս պատանի սերունդին համար գերմանացի գրող Զարլ Մէյի գործերուն մէջ եւ պատանիներու համար վերջերս գրուած ճոռն Զ. Ռոուլինկի *Յերի Փոթըր Եւ Գաղտնիքներու Խորհրդարանը* անգլիական գիրքին մէջ: Սկիզբը հեղինակը տեղեկութիւններ կու տայ իր մասին, թէ ինչպէս սկսած է դասաւանդել Յայկագեան Գոլէճին մէջ որպէս անգլերէնի ուսուցիչ: ՎԾ, ՎՅԱ}:
- 1040 ԳԵՈՐԳԵԱՆ, ՏԻԳՐԱՆ. Հարիւրամեայ Հնութեամբ Նամակ Մը Լեւոն Բաշալեանէն.** Ի. հատոր, 2000, էջ 431-438 {Այս նամակը Լեւոն Բաշալեան 1899ին Լոնտոնէն գրած է Միքայէլ Ս. Կիրճեանին, անոր *Մարտիկ Աղա* վեպին հրատարակութեան առնչութեամբ. այս վեպին մասին տեղեկութիւններ. էջ 434 կայ նամակէն պատճեն մը: ՎԾ}:
- 1041 ՍՎԱԶԼԵԱՆ, ՎԵՐԺԻՆԷ. Վարդավառի Հեթանոսական Ակունքները Արեւմտահայոց Բանահիւսութեան Մէջ.** ԻԱ. հատոր, 2001, էջ 9-30 {Վարդավառը հեթանոսական շրջանին շատ մը ծիսական տօնակատարութիւններու կողքին ջրային տարերքի պաշտամունքի տօն էր, որ քրիստոնէական շրջանին վերափոխուեցաւ Յովհաննու Ս. Կարապետի: Ս. Կարապետը Յովհաննէս Մկրտիչն է զոր Յիսուսը ջրաթաթախ ըրաւ զայն մկրտելով: ՎԾ, ՎՅԱ}:
- 1042 ԲԱԽՉԻՆԵԱՆ, ԱՐԾՈՒԻ. Մարսէյեզը Եւ Յայ Իրականութիւնը.** ԻԱ. հատոր, 2001, էջ 199-218 {Ֆրանսայի քայլերգի հայերէն թարգմանութիւններն ու անոր ազդեցութիւնը հայ իրականութեան մէջ: ՎԾ, ՎԱԱ}:
- 1043 ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՎԱԶԱԳԱՆ. Ազատութեան Խնդիրը Լեւոն Շանթի Շղթայուածը Դրամայում.** ԻԱ. հատոր, 2001, էջ 237-260 {Լեւոն Շանթի *Շղթայուածը* թատրերգութիւնը գրուած է 1918ին. պատմութիւնը տեղի կ'ունենայ ԺԲ. դարուն Անի մայրաքաղաքին մէջ, երբ իշխան Պահլաւունին առաջնորդելով հայ զանգուածը երկրէն դուրս կը շարտէ թշնամին: Այս յեղաշրջումին մասնակ-

ցած համեստ դասակարգը կը փորձէ պայքարը շարունակել ընկերային արդարութիւն ձեռք ձգելու համար, որուն պատճառաւ իշխան Պահլաւունին կը ստիպուի ուժի դիմել որպէսզի կարգը վերահաստատէ: Լեւոն Շանթ կ'եզրակացնէ որ ազատութեան գաղափարը կրնայ իրականանալ միայն երբ ապագայ սերունդները ուրիշներուն վրայ իշխելու իրենց բնազդներուն յաղթահարեն: ՎԾ, ՎԱԱ):

1044 ԶԻԿԻ, ԱԿԻԿՕ. Պատմական Դեմքերը Կոստան Չարեանի Նաւը Լերան Վրայ Վեպում. ԻԲ. հատոր, 2002, էջ 233-246 {Թէեւ Կոստան Չարեան յայտարարած է որ *Նաւը Լերան Վրայ* պատմական վեպ մը չէ, այլ՝ հիմնուած է պատմական անձնաւորութիւններու եւ իրողութիւններու վրայ: ՎԾ, ՎԱԱ):

1045 ԳԵՈՐԳԵԱՆ, ՏԻԳՐԱՆ. Գաղափարի Չոհը՝ Արփիար Արփիարեան. ԻԳ. հատոր, 2003, էջ 9-57 {Արփիար Արփիարեանի դէմ կատարուած մահափորձերուն շուրջ վկայութիւններ: Էջ 57 Արփիարեանի մահարձանին նկարը, ՎԾ, ՎԱԱ):

1046 ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ, ՍԵԻԱՆ. Անդրանիկ Ծառուկեանի Չեկոյցը՝ Սովետահայ Գրականութեան Մասին. ԻԳ. հատոր, 2003, էջ 499-515 {1948ին Լիբանանի Շթորա գիւղին մէջ տեղի ունեցած Միջին Արեւելքի հայ գրողներու համաժողովին Ծառուկեան ընթերցած է իր այս զեկոյցը, որ մինչեւ օրս անտիպ մնացած է: ՎԾ, ՎԱԱ):

1047 ԲԱՆԶԻՆԵԱՆ, ԶԵՆՐԻԿ. ԺՁ. Դարի Զայ Խոշորագոյն Զերթոդը. Գրիգորիս Աղթամարցի. ԻԴ. հատոր, 2004, էջ 9-38 {Գրիգորիս Աղթամարցի սերած է Արծրունիներու շառաւիղ Սեֆեդիէնեան իշխանական տոհմէն. ան 1512ին կը դառնայ Աղթամարի կաթողիկոս. իր բանաստեղծական տաղանդին կողքին ան նաեւ հմտացած էր գրչութեան եւ մանրանկարչութեան մէջ: ՎԾ, ՎԱԱ):

1048 ՄԻՆԱՍԵԱՆ, ՄԻՅՐԱՆ. Երուանդ Օտեանի Ապտիւլ Զամիտ Եւ Շերլոք Դոլմս Եւ Սալիհա Զանըմ Վեպերուն Արաբերէն Անձանօթ Թարգմանութիւնը (1921-1933). ԻԴ. հատոր, 2004, էջ 235-250 {Սուհամմետ Սալահ ալ Տիս ալ Զաուաքիպի թրքերէնէ արաբերէնի թարգմանած Օտեանի վերոյիշեալ երկու վեպերը: Կան այդ թարգմանութիւններուն անուանաթերթերուն լուսանկարները, ՎԾ, ՎԱԱ):

1049 ՍՎԱՉԼԵԱՆ, ՎԵՐԺԻՆԷ. Լիբանանահայ Զայրենադարձներու Զամաժամանակեայ Եւ Տարժամանակեայ Մշակութային Չարգացումը Զայաստանի Մէջ. ԻԵ. հատոր, 2005/2009, էջ 97-129 {Յեղինա-

- կուիին 1955ԷՆ ի վեր գրի առած է 5020 կտոր պատառիկներ եղեռնի հայ մնացորդացեն: Էջ 102-104 կան աղիւսակներ լիբանանահայ հայրենադարձներէ գրի առնուած նիւթերու եւ՝ բանասացներու սեռատարիքային փոխյարաբերութիւններուն վերաբերեալ: Յաւելուածին մէջ դրուած են հետեւեալները՝ Էջ 123-125 երգերու նորագրութիւններ, Էջ 126-129 լիբանանահայ հայրենադարձ բանասացներու լուսանկարները: ԷԾ, ՎԱԱ}:
- 1050 ԻՒՐՆԵՇԼԵԱՆ, ԱՐՄԵՆ. Արաբի Կերպարը Լիբանանահայ Գրականութեան Մէջ.** ԻԵ. հատոր, 2005/2009, էջ 175-204 {Վերլուծութիւն՝ լիբանանահայ գրողներու գործերուն մէջ երեւցող արաբ եւ լիբանանցի կերպարներուն մասին: ԷԾ, ՎԱԱ, ՎՖԱ}:
- 1051 ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՎԱՐԴԱՆ. Նիւթեր Կոստան Չարեանի Նաւը Լերան Վրայ Վեպի Երեւանեան Հրատարակութեան Մասին.** ԻԶ. հատոր, 2006, էջ 297-358 {Կոստան Չարեանի վեպին Երեւանի մէջ Բ. տպագրութեան քննարկում: ՎԾ, ՎԱԱ}:
- 1052 ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, ԱՆՆԱ. Գրիգոր Մագիստրոսը՝ Շարականագիր Եւ Տաղասաց.** ԻԵ. հատոր, 2007, էջ 69-75 {Բագրատունեաց Հարստութեան շրջանի հայ մշակոյթի ներկայացուցիչներէն է Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին: ՎԾ, ՎԱԱ}:
- 1053 ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՆԱՐԻՆԵ. Զաղաքը Կոստան Չարեանի Օրագրերում.** ԻԵ. հատոր, 2007, էջ 161-178 {Կոստան Չարեան միշտ հիացումով խօսած է քաղաքներու մասին եւ գանոնք արտացոլած՝ իր երկերուն մէջ: ՎԾ, ՎԱԱ}:
- 1054 ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՎԱԶԱԳԱՆ. Հրանտ Մաթեոսեանի «Ահնիծոր» Ակնարկի Գաղափարական Ենթմաստը.** ԻԵ. հատոր, 2007, էջ 179-197 {1961ին Հրանտ Մաթեոսեանի առաջին գործերէն «Ահնիծոր» ակնարկը «վերածուում էր խորհրդային երկրի տնտեսավարման սկզբունքների լուրջ քննադատութեան»: ՎԾ, ՎԱԱ}:
- 1056 ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՆԱՐԻՆԵ. Հայի Ու Հայաստանի Պատմափիլիսոփայական Ընկալումը Կոստան Չարեանի Օրագրերում.** ԻԸ. հատոր, 2008, էջ 233-262 {Նախկինի շարունակութիւնը (թիւ 1053): ՎԾ, ՎԱԱ}:
- 1057 ԱՂԱԶԱՆԵԱՆ, ՍԵՐԳԵՅ. Զաղաքական Երգիծանքը Գուրգէն Մահարու Արձակում.** ԻԹ. հատոր, 2009, էջ 231-248 {ՎԾ, ՎԱԱ}:
- 1058 ԶԻՒՆԵԱՆ, ԱԼՎԱՐԴ. «Երկնքից Ընկալ Երեք Խնձոր» Հայկական Հեքիաթի Աւարտի Բանաձեւերը.** Լ. հատոր, 2010, էջ 29-41 {Հայկական հեքիաթին իւրայատուկ աւարտին վերլուծութիւնը: ՎԾ, ՎԱԱ}:

- 1059 ԱՐԱՅԱՄԵԱՆ, ԶՆԱՐԻԿ. Առարկայական Խորհրդանշապաշտութիւն. Չարեհ Խրախունին՝ Շարժման Ակունքներում (Խորհրդանիշների Նորագոյն Համակարգի Կեսդարեայ Հանգրուանին).** Լ. հատոր, 2010, էջ 231-243 {«Հրաժարուելով քերթուածի կազմութեան աւանդական սկզբունքներից՝ Խրախունին, Չաիրատը փորձում էին դուրս մնալ «պերճաշուք», ցցուն բառերի հանդէսից եւ բանաստեղծութեան դաշտ բերել առօրեան «լեցնող» մարդկանց, առտնին փիլիսոփայութեան եզրերը՝ ոգեկոչելով, հիւսելով ազատութեան, կամքի՝ փոքր-ինչ անտես մեկնակետերը՝ յաճախ նաեւ իւրացուած եւրոպական մտածողութեան աւազանից»։ ՎԾ, ՎԱԱ}:
- 1060 ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՎԱՉԱԳԱՆ. Նիբելունգների Երգը Հայերէն.** Լ. հատոր, 2010, էջ 329-340 {Գերմանական դիւցազներգական *Նիբելունգների Երգը* գրուած է 1200ին. վերլուծութիւն գերմանական ազգայնական եւ միասնականութեան գաղափարներուն. բաղդատական գերմանական դիւցազներգութեան եւ *Սասնայ ծռեր* դիւցազնավէպին միջեւ։ ՎԾ, ՎԱԱ}:
- 1061 ՄԻՆԱՍԵԱՆ, ՄԻՅՐԱՆ. Աբրահամ Արք. Զիւբէլեան-Եկէնեանի Չոյզ Բանաստեղծութիւնները, Նուիրուած՝ Հալէպի 1813ի Ժողովրդական Ապստամբութեան.** Լ. հատոր, 2010, էջ 395-408 {Հալէպի 1813ի ժողովրդական ապստամբութեան մասին տեղեկութիւններ եւ Աբրահամ Արք.ի «Վ[ա]ս[ն] Անցից Ապստամբացն Բերիոյ» եւ «Ս[ա]կս Ապստամբութեան» Բերիոյ» երկու բանաստեղծութիւնները, նաեւ ձեռագիրէն լուսապատճենահանուած էջեր։ ՎԾ, ՎԱԱ}:

Բ) ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

- 1301 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. Հնաբանութիւնները եւ Գրաբարեան Ոճերն Ու Ղարծուածները Մուրացանի Պատմագեղարուեստական Երկերուն Մէջ.** Ա. հատոր, 1970, էջ 184-192 {ԺԹ. դարու վիպագիր Մուրացանի (Գրիգոր Տէր Յովհաննէսեան, 1854-1908) պատմավէպերուն մէջ գործածուած գրաբարը եւ դարձուածքները։ ԷԾ, ՎԱԱ}:
- 1302 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. Լեւոն Բաշալեանի Բառապաշարը.** Բ. հատոր, 1971, էջ 297-306 {Վիպասան Լեւոն Բաշալեան (1868-1943). վերջաւորութեան կայ օգտագործուած աղբիւրներու ցանկը։ ԷԾ, ՎԱԱ}:
- 1303 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. Եղիա Տէմիրճիպաշեանի Բառակերտական**

- Նպաստը Հայ Գրական Լեզուին. Գ. հատոր, 1972, էջ 184-194 {Եղիա Տեմիրճիպաշեանի (1851-1908) բառապաշարի ոճական առանձնայատկութիւնները եւ բառակերտումները: ԷԾ, ՎԱԱ, ՎՖԱ}:
- 1304 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. **Տիգրան Կամսարականի Բառապաշարին Տարրերը.** Դ. հատոր, 1973, էջ 219-235 {Տիգրան Կամսարան (1866-1941). ԷԾ, ՎԱԱ}:
- 1305 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. **Արփիար Արփիարեանի Լեզուական Հայեացքներն Ու Բառապաշարը.** Ե. հատոր, 1974, էջ 225-247 {Իրապաշտ գրականութեան եւ քննադատութեան մեծագոյն դէմքերէն Արփիար Արփիարեան (1851-1908): ԷԾ, ՎԱԱ}:
- 1306 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. **Գրիգոր Չօհրապի Լեզուին Բառաբաղադրութիւնները.** 2. հատոր, 1977-78, էջ 243-266 {Գրիգոր Չօհրապի (1861-1915) «նորարարական այս ձգտումը կը միտէր գրականութիւնը մօտեցնել ժողովուրդին եւ գեղարուեստականօրէն արտացոլել իրական կեանքը»: ԷԾ, ՎԱԱ}:
- 1307 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. **Երուխանի Լեզուին Բառաշերտաւորումները.** Է. հատոր, 1979, էջ 281-302 {Երուխանի (1870-1914) գործերուն մէջ հնաոճ բառերը, գրաբարեան հոլովածները, ոճերն ու դարձուածքները, բարբառային բառերը եւ նորակերտ բառերը: ԷԾ, ՎԱԱ}:
- 1308 ԱՂՊԱՇԵԱՆ, ՊԱՐՈՅՐ. **Մելքոն Կիւրճեանի Բառապաշարին Որոշ Տարրերը.** Ը. հատոր, 1980, էջ 289-299 {Մելքոն Կիւրճեան (Հրանդ, 1859-1915) կը պատկանի արեւմտահայ գրականութեան իրապաշտ սերունդին: ԷԾ, ՎԱԱ}:
- 1309 ՍԱՀԱԿԵԱՆ, ՍՈՒՐԷՆ Մ.. **Անթապ (Andiabe) - Այնթապ Պատմա-Բանասիրական Ծշգրտումներ.** Թ. հատոր, 1981, էջ 181-224 {Էջ 215-224 կան Այնթապի բարբառէն նմոյշներ: ԷԾ, ՎԱԱ}:
- 1310 NERSESSIAN, DR. VREJ. **Bernard Von Breydenbach's *Peregrinatio in Terram Sanctam* and its Significance for the History of Armenian Printing.** ԺԲ. հատոր, 1992, էջ 41-59 {Վրէժ Ներսէսեան, «Պերնարտ Վոն Պրէյտենպախի *Ուխտագնացութիւն Ի Սուրբ Երկիր* եւ Անոր Նշանակութիւնը Հայկական Տպագրութեան Պատմութեան Համար», անգլերէն: 1486ին գերմանացի Պերնարտ Վոն Պրէյտենպախի կողմէ գրուած գործին մասին, ուր կը նկարագրուի իր ուխտագնացութիւնը Երուսաղէմ, ուր ի միջի այլոց կը խօսի հայութեան եւ անոր կրօնական ու ընկերային առօրեային

- եւ մանաւանդ այբուբենին մասին: Ակնարկ կայ նաեւ 1473ին պաւարացի Եոհան Շիլթպերկերի գիրքին մասին, ուր կան հայութեան եւ հայ լեզուին մասին տեղեկութիւններ: ՎԾ, ՎՅԱ}:
- 1311 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. Բառերուն Միւս Երեսը.** ԺԳ. հատոր, 1993, էջ 11-27 {Յայ բառին ծագումը, յօդուածին ենթաբաժանումներն են. «Լինելութեան հորհուրդը Նախահային Մօտ», «Յայ Նախամարդուն Վախճանային հորհուրդը», «Յայ Նախամարդուն Մտածողութեան հորհուրդը», «Յայ Նախամարդուն Սեփականացումի Ըմբռնումը», «Յայ Նախամարդուն Կեանքի Դիմակալումի հորհուրդը»: ՎԱԱ}:
- 1312 ՀԱՆԱՆԵԱՆ, ԳԱՂԹՈՒՅԻ. Սուեղիայի Բարբառի հտորքէկի հօսուածքը (Ընդհանուր Տեսական Ակնարկ).** ԺԳ. հատոր, 1993, էջ 29-40 {Զեսապի բարբառը: ՎԱԱ}:
- 1313 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. Բառերուն Միւս Երեսը (Բ.).** ԺԴ. հատոր, 1994, էջ 197-217 {Նախկին հատորին մէջ, միեւնոյն խորագրով երեւցող աշխատասիրութեան շարունակութիւնը: ՎԾ, ՎԱԱ}:
- 1314 ԿԻՐՃԻՆԵԱՆ, ԴԱԻԹ. Յարակատարի Բարբառային Մի Տարբերակի Բառային Արժէքի Մասին.** ԺԴ. հատոր, 1994, էջ 219-229 {«Ած» եւ «ուկ» մասնիկներով բառերու բարբառային կիրառութիւնները. էջ 227 ծանօթագրութիւններ, ՎԱԱ}:
- 1315 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. Բառերուն Միւս Երեսը (Գ.).** ԺԵ. հատոր, 1995, էջ 13-48 {Շարունակութիւնը նախորդ երկու հատորներուն մէջ երեւցող միեւնոյն խորագրով աշխատասիրութեանց (թիւ 1311 եւ 1313). Եղեռնի 80ամեակին առթիւ հեղինակը կու տայ խումբ մը բառերու բացատրութիւնը, որոնց տարբեր իմաստները առնչուած են Եղեռնին: ՎԾ, ՎԱԱ}:
- 1316 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. Բառերուն Միւս Երեսը (Դ.).** ԺԶ. հատոր, 1996, էջ 289-336 {Նախորդներուն շարունակութիւնը (թիւ 1311, 1313 եւ 1315). կու տայ կրօնական եւ հոգեկան բառերու իմաստներն ու վերլուծութիւնը: ՎԾ, ՎԱԱ}:
- 1317 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. Բառերուն Միւս Երեսը (Ե.).** ԺԷ. հատոր, 1997, էջ 331-373 {Նախորդներուն շարունակութիւնը (թիւ 1311, 1313, 1315 եւ 1316). կու տայ իմաստներն ու վերլուծութիւնը հետեւեալ բառերու՝ որոնելու պահանջք, ինքնապաշտպանութիւն պահանջք, յարաբերականութեան գիտակցում, չափի ըմբռնումը, ենթակայութեան զգացում, ցաւի չափաստիճան,

հաճոյքի աշխարհ, բանական աշխարհ, մարդկային ընտանիք:
ՎԾ, ՎԱԱ}:

1318 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ [ՎՐԴ.]. **Բառերուն Միւս Երեսը (2.)**. ԺԸ. հատոր, 1998, էջ 153-194 {Նախորդներուն շարունակութիւնը (թիւ 1311, 1313, 1315, 1316 եւ 1317). կը քննարկէ առուտուրի եւ մարդկային ազատութեան առնչուած բառերու իմաստաբանութիւնը: ՎԾ, ՎԱԱ}:

1319 ԿՈԱՆԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ.. **Բառերուն Միւս Երեսը (Է.)**. ԺԹ. հատոր, 1999, էջ 171-195 {Նախորդներուն շարունակութիւնը (թիւ 1311, 1313, 1315, 1316, 1317 եւ 1318). կը քննարկէ պարապութեան, սուտի, ստոյգի, զատորոշման եւ ժամանակի առնչուած բառերու իմաստաբանութիւնը: ՎԾ, ՎԱԱ}:

1320 ՈՍԿԱՆԵԱՆ, ՎԱՐԴԱՆ. **Մի Զանի Խօսք Բոշայ Անուան Շուրջ**. ԻԳ. հատոր, 2003, էջ 177-192 {Յեղինակը կ'ուսումնասիրէ կարգ մը հայերէն բառերու արմատները, որոնք կ'առնչուին «բոշայ» բառին, ինչպէս օրինակ «գնչու», «Աբդալ», «ջինգյանա», եւլն.: ՎԾ, ՎԱԱ}:

1321 ԳԵՈՐԳԵԱՆ, ԳԱՅԻԱՆԷ. **Հայերէնի Բարբառագիտական Ատլաս (Կազմման Սկզբունքները եւ Առանձնայատկութիւնները)**. ԻԷ. հատոր, 2007, էջ 467-475 {«Ատլասի կազմման գործընթացը հայ իրականութեան մէջ սկսուել է 1975ին: ... Նպատակայարմար է համարուել հայերէնի բարբառների քննութիւնը կատարել լեզուաբանական աշխարհագրութեան մեթոդներով»: ՎԾ}:

1322 MOHAMMADI, MOHAMMAD MALEK & JAFARZADE, MEHDI. **A Contrastive Study of the Noun Declension in Avestan and Ancient Armenian Languages**. Լ. հատոր, 2010, էջ 43-52 {Մոհամմատ Մոհամմատի եւ Մեհտի Ճաֆարզատէ, «Գոյականի Հոլովակերտումը Գրաբարի եւ Աւեստայի Մէջ» անգլերէն: Բաղդատական «գրաբարի եւ հին պարսկերէնի՝ Աւեստայի լեզուի գոյականի շարահիւսական պաշտօններուն եւ հոլովակերտման երեւոյթներուն միջեւ»: ՎԾ, ՎՅԱ}:

Գ) ԱՐԽԻՒ, ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՁԵՌԱԳՐԵՐ

1501 ԽԱԶԻԿԵԱՆ, Լ[ԵՒՈՆ] ԵՒ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա.. **Ղամասկոսի Թանգարանի Հայկական Պատահիկները**. Գ. հատոր, 1972, էջ 9-54 {Ժ.-ԺԳ.

դարերու հայերէն ձեռագիրներ եւ անոնց բովանդակութիւնները. էջ 30-53 նկարներ այս ձեռագիրներէն: ԷԾ, ՎԱԱ):

1502 ՄԻՆԱՍԵԱՆ, Լ[ԵՒՈՆ] Գ.. Հայերէն Երկու Գրչագիր Նիւ Եորքի «Հանրային Գրադարան»ում. Դ. հատոր, 1973, էջ 169-178 {Երկու ձեռագիրներու՝ *Սահմանք Իմաստասիրականք Դաւթի Փիլիսոփայի* ժողովածու՝ 1621ին գրուած, իսկ միւսը՝ *Մաշտոց*, գրուած ԺԵ. դարուն ցուցակագրումը: Էջ 171՝ ձեռագիրներէն մէկուն կողքի նկարը. ՎԱԱ):

1503 ՍԱՆՃԵԱՆ, ԱԵՏԻՍ Գ.. Միջնադարեան Երեք Անտիպ Տաղեր. Ե. հատոր, 1974, էջ 199-212 {Լոս Անճելըսի Գալիֆորնիոյ համալսարանին մէջ կայ ձեռագիր *Տաղարան* մը, որուն մէջ կը գտնուին միջնադարեան երեք տաղեր, որոնք անյայտ էին հայ բանասիրութեան, առաջինը՝ Ֆրիկէն, երկրորդը՝ Առաքել Բաղիշեցիէն եւ երրորդը՝ Յովհաննէս Թլկուրանցիէն: ՎԱԱ):

1504 ԴԱՆԻԷԼԵԱՆ, ԱՆՈՒՇԱԲԱՆ ՎՐԴ.. Մերձ. Արեւելքի Աստուածաբանական Ծեմարանի Հայերէն Ձեռագիրները. Ե. հատոր, 1979, էջ 141-164 {ԺԳ. դարէն մնացած վեց ձեռագիրներու ներկայացումը, որոնք պահուած են Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ծեմարանին մէջ: Էջ 147, 153, 159՝ ձեռագիրներէն էջերու նկարներ: ԷԾ, ՎԱԱ):

1505 ՄԻՆԱՍԵԱՆ, Լ[ԵՒՈՆ] Գ.. Մի Զանի Նոր Գրչագրեր. Թ. հատոր, 1981, էջ 159-180 {ԺԵ. դարէն սկսեալ 10 նոր ձեռագիրներու ցուցակագրումը, որոնցմէ վեցը Նոր Զուղայի, երկուքը Թեհրանի, մէկը Լոնտոնի եւ մէկը Աթենքի մէջ: ՎԱԱ):

1506 ՄԻՆԱՍԵԱՆ, Լ[ԵՒՈՆ] Գ.. Ս. Ամենափրկիչ Վանքի Արխիւը եւ Էմին Յովսէփ Էմինի Երկու Նամակները. Ժ. հատոր, 1982-84, էջ 281-286 {Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիւները եւ Յովսէփ Էմինի (1726-1809) իոն գտնուող երկու նամակները: ԷԾ, ՎԱԱ):

1507 ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳԵՈՐԳ. Փաւստոս Բուզանդի Հրատարակութիւններն Ու Ձեռագրերը. ԺԹ. հատոր, 1999, էջ 9-63 {Ե. դարու պատմիչին գործերուն ձեռագրերու ցանկն ու անոնց յետագայ հրատարակութիւնները: ՎԾ, ՎԱԱ):

1508 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՊԵՏՐՈՍ Հ.. Հենրիկոս Բրենները եւ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան Լատիներէն Համառօտագրուած Առաջին Թարգմանութիւնը. ԺԹ. հատոր, 1999, էջ 123-140 {Հեղինակը ցոյց կու տայ թէ Խորենացիի գործին առաջին լատիներէն

թարգմանութիւնը կատարած է Դոմինիկեան Միաբանութենէն հայր Յովհաննէս Բարթուղիմէոսը: ՎԾ, ՎԱԱ}:

1509 NERSESSIAN, REV. VREJ NERSES. The Co-operation Between Father Ghewond Alishan and Lord Robert Curzon in the Field of Biblical Research (The British Library, MS. OR 15277). ԻԳ. հատոր, 2003, էջ 433-440 {Հայր Վրէժ Ներսէսեան, «Հայր Ղեւոնդ Ալիշանի եւ Լորտ Ռոպըրթ Զըրզընի Միջեւ Համագործակցութիւնը՝ Աստուածաշունչի Ուսումնասիրութեան Ծիրին Մէջ», անգլերէն: Հեղինակը կը նկարագրէ Բրիտանական Գրադարանի Ձեռագրային հաւաքածոյին մէջ պահպանուած անգլիացի քաղաքական գործիչ Լորտ Ռոպըրթ Զըրզընի սեփականութիւնը եղած *Պատմութիւն Յովսէփի եւ Ասանեթայ* հայերէն ձեռագիրը, զոր իտալերէնի թարգմանած է Հայր Ղեւոնդ Ալիշան՝ Զըրզընի դղեակ իր հիւրընկալութեան շրջանին: ՎԾ, ՎՅԱ}:

1510 DERONIAN, ARAXY. The Armenians of Lebanon at the Library of Congress. ԻԵ. հատոր, 2005/2009, էջ 205-255 + 271-291 {Արաքսի Տերոնեան, «Լիբանանի Հայերը «Ծերակոյտի Գրադարան»ին Մէջ», անգլերէն: Լիբանանի հայութեան առնչուող հրատարակութիւններ որոնք առկայ են Ա.Մ.Ն.ի Ուաշինկթընի «Տը Լայպըրի Աֆ Գոնկրէս»ին մէջ. կան աղիւսակներ եւ ցանկեր. յաւելուածին մէջ՝ էջ 273-281 կան ցանկերը այն հեղինակներուն, հրատարակչատուներուն, մամուլին եւլն., որոնցմէ հատորներ կան այս գրադարանին մէջ: ԵԾ, ՎՖԱ}:

